



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



# ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



**ԱՊԱՐԱՆ  
ՆԻԳԱՎԱՆ  
ՄԱՐԱԼԱՆՁ  
ԼՈՒՍԱԳՅՈՒՂ  
ՔՈՒՉԱԿ**



**ՄՐՑԱԿՑԱՅԻՆ  
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)**

## ԱՊԱՐԱՆ, ՄԱՅԻՄ-2014

*Այս վերլուծությունն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:*

## Վերլուծություն իրականացնող կառույցը

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՊԱՐԹՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ  
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

*Արագածոտնի մարզի Ապարան, Նիգավան, Լուսազյուղ, Մարալանջ և Քուչակ համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014թ-ի ապրիլ ամսին ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում:*

*Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելություններն ու ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:*

Գործընթացն իր մեջ ներառում է հետևյալ փուլերը.

- ⇒ PACA գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի հավաքագրում:
- ⇒ Համայնքների տնտեսական քարտեզագրում. առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում:
- ⇒ Առկա արժեզրթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում:
- ⇒ Աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար:
- ⇒ Արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում:
- ⇒ Նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում:
- ⇒ Ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում համայնքների ակտիվ դերակատարներին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերլուծություն իրականացնող կառույցը.....	2
Համայնքների հակիրճ նկարագրություն.....	4
Համայնքների մրցակցային առավելությունները.....	5
Տնտեսության հիմնական ճյուղերը .....	6
Անասնապահության ճյուղի վերլուծություն.....	6
Ճյուղի հիմնախնդիրները.....	8
Կաթնամթերքի արտադրություն .....	11
ԿԱԹՆԱՍԹԵՐՔԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՇՂԹԱ.....	13
Կաթնամթերքի արժեչղթայի զարգացման նախաձեռնությունները առանձին փուլերում.....	14
Հողագործության ճյուղի վերլուծություն .....	16
Զարգացման նախաձեռնություններ հողագործության արժեչղթայում .....	18
Առևտուր և տեղական արտադրություն .....	19

## Համայնքների հակիրճ նկարագրություն

Ապարանը և շրջակա 4 գյուղերը գտնվում են Արագած լեռնազանգվածի արեւելյան փեշերին: Ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1850-1880 մետր: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են՝ ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են՝ համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 17-18 աստիճանների, իսկ հունվարյանը՝ մինուս 6-8 աստիճանների միջև ըստ Ցելսիուսի սանդակի:

Բնակչության հիմնական մասը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Որոշ հատվածն էլ ներգրավված են առևտրի, զովագուցիչ ըմպելիքների և կաթնամթերքի արտադրության, սննդի կետերի ոլորտներում:

Համայնքների վիճակագրական տվյալները.

	Ապարան	Քուչակ	Նիգավան	Լուսազյուղ	Մարալանջ
Բնակչություն	6400	2281	753	944	231
Տնային տնտեսություններ	2004	555	161	240	60
Վարելահողեր՝	772 հա	1207 հա	626 հա	230 հա	109 հա
որից ջրովի	-	418	-	93 հա	27
Խոտհարքներ	133	735	81	16	25
Արոտավայրեր	1243	392	1956	517	571
Կոմբայններ	-	3	-	-	-
Տրակտորներ	40	15	14	6	2
Բեռնատարներ	112	82	35	19	5

## Համայնքների մրցակցային առավելությունները.

- ⇒ Տարվա մեջ արևային օրերի քանակը երկրի մնացած շրջանների հետ համեմատած ամենաշատն է:
- ⇒ Մառնորակ և էկոլոգիապես մաքուր, մեծաքանակ ջրի աղբյուրներ:
- ⇒ Ալպիական մարգագետիններ, անասնապահության համար երկրի լավագույն գոտիներից է:
- ⇒ Հյուրասեր և ավանդապաշտ բնակչություն:
- ⇒ Դեղաբույսերի և ուտելի բույսերի մեծ և բազմազան պաշար:
- ⇒ Հայրենակցական միության առկայություն, որը բազմազան հարցերով էական աջակցություն է ցուցաբերում շրջանի համայնքներին:
- ⇒ Երևան-Վանաձոր միջպետական ճանապարհին անցնում է Ապարանի և Քուչակի միջով, որի շնորհիվ գնալով զարգանում է առևտրի և սպասարկման ոլորտը:



⇒ Երկար տարիների մասնագիտական փորձ անասնապահության՝ պանրագործության ոլորտում՝ մասնավորապես լոռի և չանախ տեսակների մասով:

## Տնտեսության հիմնական ճյուղերը

*Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտե՛ղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտե՛ղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի և անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության) միջին ցուցանիշների հետ:*

**Ապարան, Նիգավան, Լուսազյուղ, Սարալանջ և Քուչակ** համայնքներում տնտեսության հիմնական ճյուղերն են՝ անասնապահությունը, մասամբ՝ հողագործությունը, կաթնամթերքի արտադրությունը և առևտուրը:

## Անասնապահության ճյուղի վերլուծություն

Անասնապահության գերակայությունն Ապարանի շրջանում բավական ակնհայտ է ու հիմնավոր: Արոտավայրերի բազմազանությամբ և աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ այստեղ արտադրված կաթն ունի շատ բարձր յուղայնություն և այնպիսի հատկություններ/բաղադրություն/, որոնք համապատասխանում են բարձրորակ և թանկարժեք պանիր ստանալուն: Դեռևս Խորհրդային շրջանի վերջին տարիներին Շվեյցարիայի պանրագործական ընկերությունների կողմից հետազոտություն է իրականացվել Ապարանի կաթի որակի և բաղադրության ստուգման համար: Համոզվելով, որ տեղի կաթն ամբողջությամբ համապատասխանում է “շվեյցարական պանիր” արտադրելու համար, շվեյցարական ընկերություններն Ապարանում հիմնել են պանրի արտադրամաս: Սակայն, ինչ-ինչ պայմանավորվածություններ չկատարելու պատճառով կարճ ժամանակ անց նախաձեռնությունը դադարել է գործել:

Անասնապահությամբ վերոհիշյալ համայնքներում զբաղված է բնակչության մոտ 80%-ը:

Անասնապահության մեջ հիմնական մասը բաժին է ընկնում խոշոր եղջերավորներին: Անասունների հիմնական տեսակը “կովկասյան գորշն” է: Այս շրջանում կովերի կաթնատվությունը կազմում է տարեկան 1700-2200 լիտր՝ կախված խնամքից և անասնակերից: Հիմնականում կերակրում են բնական խոտով: Քիչ ֆերմերային տնտեսություններ կան, որոնք կերակրամիավորի մեջ ապահովում են ճակրնդեղի թփեր, մասամբ՝ գարի և առվույտ: Կաթնատվության ամենաբարձր ցուցանիշը նշված առաջատար տնտեսություններին է:

**Անասնագլխաքանակի բաշխվածքն ու անասնակերի արտադրության ծավալներն ըստ գյուղերի.**

	Ապարան	Քուչակ	Նիզավան	Լուսագյուղ	Մարալանջ
<b>Խոշոր եղջերավոր</b>	1670	1615	1577	689	178
• Որից՝ կովեր	957	729	810	397	90
<b>Մանր եղջերավոր</b>	511	833	799	1296	57
<b>Խոզ</b>	119	71	23	38	6
<b>Առվույտի մշակում</b>	37 հա	7 հա	60 հա	90 հա	10 հա

Նիզավան և Լուսագյուղ համայնքներում արդեն առկա են քիչ քանակությամբ բարելավված ցեղեր (շվից, հոլշթեն, սիմենտալ), որոնց կաթնատվությունը հասնում է տարեկան 3,5 տոննայի՝ միջին կերամիավոր ապահովելու պարագայում:

*Տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնագլխաքանակի*

	Ապարան	Քուչակ	Նիզավան	Լուսագյուղ	Մարալանջ
<b>20-50 գլուխ</b>	2	15	15-20	2	-
<b>5-20 գլուխ</b>	10	100	40-45	15	4
<b>1-5 գլուխ</b>	390	-	60-65	220	30

Բոլոր հինգ համայնքներում միասին տարեկան արտադրվում է մոտ 6000 տոննա կաթ: Մթերումն իրականացվում է տեղի վերամշակողների և երկրի կաթնամթերք արտադրող առաջատար ընկերությունների կողմից: Ապարանում գործող տեղի

մթերման կետերը կաթ են մթերում նաև շրջանի մնացած այն համայնքներից, որոնք վերլուծությունում ներկայացված չեն, ինչով էլ լրացնում են համայնքից դուրս գործող ընկերությունների կողմից մթերվող կաթի քանակը:

Մեկ կովի տարեկան խնամքի վրա, ներառած խոտ, թեփ, ճակընդեղի թուփ, աղ, կիրթ, հովիվ, անասնաբուժական միջոցներ, ծախսվում է միջինը 150 հազար դրամ: Սա այն դեպքում, երբ ֆերմերն ինքն է արտադրում (քաղում և պահեստավորում խոտը) անասնակերը: Շուկայից ձեռք բերելու դեպքում ծախսերը մեկ կովի հաշվով ավելանում են մոտ մոտ 30 000 դրամով:

World Vision կազմակերպության աջակցությամբ Ապարանի շրջանում իրականացվում են խոշոր եղջերավորների արհեստական սերմնավորման միջոցառումներ: Ֆերմերները հատուցում են անասնաբույժի ճանապարհաձախարհ, իսկ կազմակերպությունը հոգում է մնացած ծախսերը: Ընթացիկ տարում պլանավորվում է շարունակել աջակցության նախաձեռնությունը:

### **Ճյուղի հիմնախնդիրները**

Շրջանի արոտավայրերն հիմնականում ջրարբիացված չեն: Նախիրը ջրելու համար հարկ է լինում ամեն օր անցնել 5-10 կիլոմետր, ինչն արդեն բացասական է ազդում կովերի կաթնատվության վրա: Տեղադրված չեն (կամ շարքից դուրս են եկել) նաև խմոցներ, ինչը նույնպես էական բարդություն է առաջացնում անասուններին ջրով ապահովելու համար:



Անասնապահական օպտիմալ տնտեսությունների շահույթի հաշվարկ:

Անվանում	Կաթի արտադրություն	Մսի արտադրություն
1 Օպտիմալ տնտեսություն	10 կով	10 հորթ
2 Միավորից ստացվող միջին արդյունքը	2 000 լիտր կաթ 1հորթ	200 կգ միս երկու տարում
3 Ընդհանուր արդյունքը	20 000 լ կաթ 10 հորթ	2000 կգ միս
4 Մեկ միավորի մեծածախ գինը	150 դրամ՝ (գինը փոփոխվող է) մեկ լիտր կաթը. 60 000 դրամ՝ մեկ հորթը	2000 դրամ՝ մեկ կիլոգրամ միսը
5 Ստացվող եկամուտը	3 600 000	4 000 000
6 Կատարվող ծախսերը	1 500 000	2200000
7 Շահույթ	2 100 000	1 800 000 (երկու տարում)

10 կովը (ցեղերի բարելավման դեպքում քանակը կարող է իջնել) նվազագույն գլխաքանակն է, որից հետո միայն տնտեսությունը սեփական եկամուտներով կարող է ընդլայնվել՝ միաժամանակ բավարարելով ընտանիքի նվազագույն ծախսերը: Շահութաբերությունը մսի արտադրության մեջ փոքր է, քան կաթի արտադրության: Սակայն, եթե տնտեսության գլխաքանակը փոքր է 10-ից, ապա ավելի արդյունավետ է կապիտալը ներդնել մսի արտադրության մեջ:



## Վարդգես Պետրոսյան. էլեկտրիկից մինչև գյուղատնտես և անասնաբույժ



«1999 թ. Ռուսաստանից վերադարձա Հայաստան ու ընդունվեցի էլեկտրացանցում աշխատելու՝ որպես բաժնի պետ: Մինչև 2005 թ. ուրիշների տարածքում մի քանի կով էի պահում», - հիշում է 62-ամյա գյուղատնտես

Վարդգես Պետրոսյանը՝ Ապարանից: 2005թ. արդեն ուներ 65 կթու կով, 42 ցուլ, 59 հորթ: Մոսկվայից իր հետ բերած գումարով 2003 թ. արդեն գնել էր մի քանի կով և ցուլ: Այնուհետև ձեռք է բերել Ապարանի և հարևան Մուլքի գյուղի սահմանին գտնվող գոմերի տարածքը: Բարեկարգել և խնամել է տարածքը ու սկսել անասնաբուծությունը: Մինչև 1994թ. Հայաստանից հեռանալը աշխատել է որպես էլեկտրիկ՝ սպասարկելով բուժտեխնիկան: Հենց այդ ընթացքում էլ ձեռք է բերել նաև բժշկության պրակտիկ գիտելիք:

Վերականգնել և նորոգել է հին կերադացը, որպեսզի կենդանիներին ապահովի կերով: Այժմ կովերից ստացված կաթը վաճառում է Ապարանում և Երևանում: Նաև արտադրում է թան, որը նույնպես վաճառում է հայրենի քաղաքում և մայրաքաղաքում: Փորձել է զբաղվել նաև պանրագործությամբ: Իրացման շուկայի հետ ունեցած խնդիրների պատճառով դադարեցրել է պանրի արտադրությունը:

Վարդգես Պետրոսյանը վարկ է վերցրել, որը գրեթե ամբողջությամբ վճարել է: Ավարտելուց հետո մտադիր է կովերի քանակն ավելացնել ևս 25-ով, ստեղծել կաթի մթերման կետ, որտեղ կհավաքի նաև շրջակա գյուղերի ֆերմերների կաթը: Ունի 6500 քմ հողատարածք՝ սարի լանջին, որը սակայն չի կարողանում օգտագործել՝ ջրի բացակայության պատճառով: Բացի կաթի մթերումից, Պետրոսյանը ցանկանում է գործն ընդլայնելիս նաև սկսել հավաբուծությամբ զբաղվել:

Իր գլխավոր առավելությունը համարում է գիտելիքը և փորձը՝ անասնաբուծության ոլորտում: «Հա՛մ անասունի, հա՛մ մարդու բժիշկ եմ», - ժպտալով ասում է Պետրոսյանը: Հաճախ գյուղացիները կենդանիներին առաջին բուժօգնությունը ցուցաբերելու համար օրվա ցանկացած ժամին հենց նրան են դիմում: Իր ֆերմայում և գյուղացիների համար կատարում է

նան արհեստական բեղմնավորում, տարբեր սորտերի խաչասերում: «Ամբողջ Ապարանում ֆերմերները չեն հասկանում, որ կովի կաթնատվությունը կապված է նրա հանգիստ վիճակի հետ: Ես բերել եմ մեր ազգային-ժողովրդական երգերն եմ միացնում կթելու ժամանակ: Թվում է, թե անասուն են, չեն հասկանում, բայց եղպես չէ: Կովերս հանգստանում են, առանց խանգարելու թուլանում և թողնում են, որ հանգիստ կթենք իրենց: Դրանից նաև կաթնատվությունն է ավելանում», - հպարտորեն նշում է գյուղատնտեսը: Պետրոսյանը շեշտում է, որ իր կովերը լավագույնն «ընդունել են» ժողովրդական երաժշտությունը, նույնիսկ դասականի ժամանակ այդքան հանգիստ չեն եղել:

### Կաթնամթերքի արտադրություն

Ներկայումս Ապարանում գործում են 5-6 միջին պանրագործական և կաթնամթերք արտադրող ընկերություններ և մոտ 10 տնային պայմաններում արտադրողներ: Հիմնականում արտադրում են լոռի, չանախ տեսակի պանիր, փոքր քանակությամբ նաև չեչիլ, թել-պանիր և բրինձա: Կայացած ընկերություններից պանրի որոշակի տոկոսը արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն՝ միջնորդ ընկերությունների և ֆիզիկական անձանց միջոցով, իսկ մնացած ապրանքի մեծ մասը վաճառվում է Երևանի սուպերմարկետներում և խանութներում, Վանաձորում և Ապարանում: Գյուղական համայնքներում փոքր անասնապահական տնտեսությունների կողմից կաթը վերածվում է մածուխի և վաճառվում Երևանի շուկաներում (հիմնականում՝ բակերում): Միջին ֆերմերներն (10 և ավել անասնազվիաքանակ ունեցող) ամբողջությամբ կաթը հանձնում են տեղի և այլ վերամշակող ընկերություններին: Զգալի տեղ է զբաղեցնում թանի արտադրությունը: Կաթի և Ապարանի ջրի համային բարձր հատկանիշների շնորհիվ Ապարանի թանը հայտնի է և մեծ պահանջարկ է վայելում: Թանը վաճառվում է շշալցված և մեծ տարաներով: Շշալցված թանը վաճառվում է առևտրի կետերում և հասարակական սննդի օբյեկտներում, իսկ մեծ տարաներով թանը պահանջված է միայն սննդի օբյեկտների և արագ սննդի կետերի կողմից:

## Արթուր Քոչարյան

### *Պանրագործությունը՝ որպես սիրելի և եկամտաբեր գործունեություն*

43-ամյա Արթուր Քոչարյանը պանրագործությամբ սկսել է զբաղվել 2007 թ.-ից: Սկզբում պանիրն արտադրել է միայն իր տան եղած մի քանի կաթսայի մեջ: Սկսել է օրական 40 լիտր կաթը պանիր դարձնելուց, հիմա ծավալը դրանից մի քանի անգամ ավելի է՝ մոտ 300 լիտր օրական: Պանրի արտադրությունից բացի, Արթուր Քոչարյանը փոքրիկ խանութ ունի Ապարանում: Մակայն խանութի առևտրի ծավալը տարեցտարի պակասում է:




Տարեկան միջինում արտադրում է 50 տոննայից ավելի կաթնամթերք՝ պանրի տեսականի, կարագ, թան և այլն: Նոր տեխնոլոգիա է մշակել՝ պանիրը կտրատում է 1 կիլոգրամանոց կտորներով և պահում: Ասում է՝ այդպես պանիրն աղն ավելի լավ է «ուտում» ու ավելի երկար է պահպանվում: Ցանկանում է ընդլայնել գործը՝ կառուցելով նաև պահեստ, որպեսզի կարողանա արտադրանքն ավելի երկար պահպանել: «Կաթնամթերքից միայն պանրի արտադրությունն է ձեռնտու, մնացածից եկամուտ գրեթե չկա, մանավանդ՝ թանից, տանջանքն է շատ», - ասում է Քոչարյանը:


Պանրագործությամբ զբաղվում է ծնողների և կնոջ հետ: Երեխաները դեռ փոքր են: Մակայն Արթուրը դեմ չէր լինի, եթե նրանք էլ շարունակեին գործը: «Ինչու՞ ընկնել դռնեղուր՝ աշխատանք փնտրելով, թող շարունակեն», - ասում է նա:

Գիտելիքն ստացել է ընտանիքից, սակայն պատրաստ է նոր գիտելիք ստանալ, եթե որոշի ընդլայնել արտադրության տեսականին և նախաձեռնել նոր արտադրատեսակներ: Ապագայի համար մտածում է նաև ստեղծել սեփական ապրանքանիշը, որպեսզի ավելի ճանաչելի դառնա շուկայում: Ապրանքը սպառվում է ոչ միայն Արագածոտնի մարզում, այլև Արմավիրում, Տավուշում, Երևանում: Ապրանքը վաճառում է սեփական բեռնատար մեքենայով:

## ԿԱԹՆԱՍԹԵՐՔԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՇՂԹԱ



կաթ - (6000 տ)  
 Պանիր 500 տ  
 Թան  
 Կաթնամթերք



## Կաթնամթերքի արժեշտային զարգացման նախաձեռնությունները առանձին փուլերում

Անասնապահության առաջին փուլը անասնակերի աճեցումն է, կաթի և մսի արտադրությունը: Ստորև ներկայացված են արժեքային շղթայի օղակներում առկա թույլ կետերը և զարգացման հնարավոր միջամտությունները:

1



Անասունների բուծում, կաթի և մսի արտադրություն

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Արոտավայրերում խմելու ջրի սակավություն	Անասունների խմելու ջրի ապահովում	Համայնքների արոտավայրերի ջրարբիացման աջակցություն, խմոցների տեղադրում:
Կերաղացների բացակայություն	Կերաղացների հիմնում	Կերաղացների հիմնում սեփական ֆերմաներում, ծառայության մատուցում:
Որակյալ խտացված կերերի բացակայություն	Անասնակերի տեղական արտադրության խթանում	Խտացված կերերի արտադրության հիմնում:
Ֆերմաներում անասնագլխաքանակը հիմնականում համալրված է ցածր կաթնատվություն ունեցող ցեղերով:	Կաթնատու ցեղերի բարելավում	Աստիճանական անցում կատարել բարձր կաթնատվություն ունեցող ցեղերի:
Շրջանում անասնապահության զարգացման հնարավորությունների դիմաց գլխաքանակը քիչ է	Անասունի գլխաքանակի (ավելի շատ կաթնատու) ընդլայնում, ֆերմաների ավելացում	Գյուղատնտեսական մատչելի վարկերի տրամադրում, տիպային ֆերմաների կառուցում, բարելավված ցեղերի ձեռքբերում:
Ցածր իրազեկվածություն նոր, բարելավված ցեղերի խնամքի, բազմացման ուղղությամբ	Մասնագիտական կարողությունների բարձրացում	Դասընթացների և սեմինարների կազմակերպում ֆերմերների համար, փորձի փոխանակում այլ շրջաններում բարելավված ցեղատեսակներ ունեցող ֆերմերների հետ:

# 2



## Կաթի վերամշակում, փաթեթավորում

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Արտադրվում է հիմնականում լոռի և չանախ տեսակի պանիր: Բացակայում են կրթական և մասնագիտական վերապատրաստման օղակները:	Մասնագիտական վերապատրաստումներ, որակյալ և թանկարժեք արտադրատեսականու ընդլայնում	Ուսումնաարտադրական կենտրոնի հիմնում, դասընթացների կազմակերպում, նոր տեխնոլոգիաների և ինֆորմացիայի տրամադրում:
Գործարար հմտությունները, շուկաների ընդլայնման հմտությունները արտադրող տնային տնտեսությունների մոտ թույլ է:	Գործարար հմտությունների զարգացում տնային պայմաններում արտադրողների (սկսնակների) համար	Գործարար դասընթացների կազմակերպում, ֆինանսական աջակցության տրամադրում:
Տնային տնտեսություններում արտադրությունը կազմակերպվում է ժամանակակից ստանդարտներից դուրս:	Պանրի ժամանակակից (փոքր) արտադրամասերի հիմնում	Տեղական կաթնամթերքի և մսամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն, որակի միասնական ստանդարտների մշակում:

# 3



## Իրացում

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Արտադրողների մեծ մասը չունեն տարածված ճանաչում երկրի շուկաներում:	Մարքեթինգային ընդհանուր ռազմավարության գործարկում	Տեխնիկական օժանդակություն, ապրանքի առաջմղում շուկաներում, կաթնամթերքի արտահանմանն ուղղված աջակցություն:

## Հողագործության ճյուղի վերլուծություն

Հինգ համայնքներում էլ, բնակլիմայական պայմաններից ելնելով մշակում են կարտոֆիլ, ցորեն, գարի, մասամբ էլ՝ կաղամբ: Նշված բոլոր մշակաբույսերի բերքատվությամբ շրջանը զիջում է երկրի առաջատար համայնքների ցուցանիշներին:

### Մշակաբույսերի ծավալներն ըստ համայնքների

	Ապրան	Քուչակ	Նիգվան	Լուսազյուղ	Սարալանջ	Բերքատվությունը 1 հեկտարից
Ցորեն	4 հա	20	2 հա	10 հա	1 հա	2-2,5 տոննա
Կարտոֆիլ	11	15	10	40	4	25-30 տոննա
Գարի	19	30	50	10	1	2,5-3 տոննա
Կաղամբ	-	5	-	-	-	35 տոննա

Հիշատակված վարելահողերի ծավալից և մշակաբույսերի զբաղեցրած տարածքից պարզ երևում է, որ վարելահողերի կեսից ավելին չի մշակվում: Դրանից բացի, մշակաբույսերի կեսից ավելը զբաղեցնում է անասնակերը: Պատկերը պատճառաբանվում է երկու հիմնական գործոններով՝ ոռոգման համակարգի բացակայություն և ճյուղի ցածր շահութաբերություն: Մարդիկ աստիճանաբար հրաժարվում են հողագործությունից՝ բացառությամբ անասնակերի մշակումից:

### Հնարավոր զարգացումներ

Վերը նշված մշակվող հիմնական տեսակներից բացի, որոշ տնտեսությունների կողմից փոքր տարածքների վրա (Քուչակ համայնքում՝ հնդկաձավարի, մնացած համայնքներում էլ՝ հաճարի) մշակման փորձեր են կատարվել: Իսկ տնամերձ հողամասերում շատ տնտեսություններ փոքր ծավալներով ազնվամորու աճեցմամբ են զբաղվում:



Հնդկաձավարի մշակումը դադարեցվել է, քանի որ այն մինչև իրացումը պետք է որոշակի վերամշակում անցնի (կեղևազատում), ինչի հնարավորությունը շրջանում չկա: Հեկտարի հաշվարկով բերքատվությունը կազմել է 1,5-2 տոննա: Շուկայում հնդկաձավարի գինը տատանվում է 500-600 դրամ, իսկ ցողունն օգտագործվում է որպես անասնակեր: Կեղևազատման ծառայության առկայության դեպքում հնդկաձավարի մշակումը կարող է դառնալ արդյունավետ ոլորտներից մեկը:

Հաճարի բերքատվությունը 1 հեկտարից կազմում է միջինը 2 տոննա: Շուկայական գինը՝ 400-700 դրամ: Բերքատվությամբ և մշակման ծախսերի չափով այս մշակաբույսը գրեթե հավասարվում է ցորենին և գարուն, սակայն, ունենալով կրկնակի թանկ վաճառքի գին, շահութաբերությամբ գերազանցում է հացահատիկային այդ երկու տեսակներին:

Ազնվամորու մշակման պատկերն ավելի գրավիչ է: Ոչ քիչ տնտեսություններ տնամերձ հողամասերում փոքր հատվածներ հատկացրել են ազնվամորու մշակմանը: Ազնվամորին ցրտադիմացկուն է, չի ցրտահարվում Ապարանի շրջանին բնորոշ խստաշունչ ձմեռներից և ադապտացված է բարձրադիր գոտիներում բերք տալուն: Վաճառքը կազմակերպվում է հիմնականում Երևանի մեծածախ շուկաների միջոցով՝ 1 կգ-ը 500-600 դրամ: Ազնվամորու հանդեպ պահանջարկը մեծ է նաև վերամշակող ընկերությունների կողմից, որոնք օգտագործում են այն յոգուրտների, պահածոների և մուրաբաների մեջ: Նշված ընկերությունները մթերում են 1 կգ-ը 600-800 դրամով: Ըստ հաշվարկների՝ 1 հեկտարի բերքատվությունը կազմում է 6-10 տոննա: 1 կգ ազնվամորու մշակման և հավաքման վրա ծախսվում է մոտ 300 դրամ:

Հատապտուղների մշակումն ու ընդլայնումը հողագործության մեջ Ապարանի շրջանում կարող է դառնալ ամենաարդյունավետ ուղղությունը:

## Զարգացման նախաձեռնություններ հողագործության արժեշիթայում

- ⇒ Հաճարի և հնդկաձավարի մշակում, ծավալների ընդլայնում:
- ⇒ Ոռոգովի տարածքների ընդլայնում:
- ⇒ Հնդկաձավարի կեղևազատման ծառայության հիմնում:
- ⇒ Հողերի վերլուծություն՝ ըստ ազնվամորու աճեցման համապատասխանության:
- ⇒ Հատապտուղների աճեցման ընդլայնում և տարածում:
- ⇒ Հատապտուղների աճեցման մասնագիտական դասընթացների կազմակերպում:
- ⇒ Հատապտուղների վերամշակման կետերի հիմնում (մուրաբաներ, հյութեր):



## Առևտուր և տեղական արտադրություն

Ապարան համայնքի՝ Երևան-Վանաձոր-Գյումրի գլխավոր մայրուղու վրա գտնվելու գործոնը, տեղի գործարարների աչքից չի վրիպել: Ամեն ինչ սկսվել է ճամփեզրերին (մայթերի վրա) տեղակայված բազմաթիվ ցայտադբյուրների առկայությունից: Մարդիկ, անցնելիս այդ հատվածով, հաճախ կանգնել են հագեցնելու ծարավը՝ Ապարանի սառնորակ ջրերով: Նկատելով, որ այս ճանապարհով օրական 300-500 մարդ է անցնում, ճանապարհամերձ հատվածում կազմակերպել ու աստիճանաբար զարգացրել են առևտուրն ու սպասարկումը: Այստեղ գործում են առևտրի կենտրոններ, սուպերմարկետ, գազայցակայան, արագ սննդի կետեր և այլն: Նշված օբյեկտների գործունեությունն աստիճանաբար խթան է հանդիսացել տեղական արտադրության զարգացման համար:

*Բացի կաթնամթերքից, Ապարանում բավականին զարգացած է հացաբուլկեղենի, սեղանի ջրի և զովացուցիչ ըմպելիքների արտադրությունը, որոնց մի մասը վաճառվում է ճամփեզրին տեղակայված առևտրի և հասարակական սննդի կետերում: Սակայն, մարզից դուրս պրանքատեսականին թույլ է ներկայացած և չունի մեծ ճանաչում: Ոլորտի արդյունավետության և ճանաչելիության բարձրացման ուղղությամբ նպատակահարմար է կազմակերպել տոնավաճառներ, փառատոններ և այլ միջոցառումների, որոնց միջոցով կգովազդվի տեղական ապրանքն ու կմեծանա պահանջարկի ծավալը մարզից դուրս:*

Շնորհակալություն ենք հայտնում Ապարան, Նիգավան, Լուսազյուղ, Սարալանջ և Քուչակ համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամներին՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

